

# ՀԱՏԿԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ\*

**Մետաքսյա Դարաբյան**  
*Հայաստանի պետական մանկավարժական համալսարան*

**Մ**ույն հոդվածը ներկայացնում է իդիոնների՝ որպես հաղորդակցման իրազեկության ձևավորման ու զարգացման արդյունավետ միջոցի դասավանդման խնդիրները: Հոդվածի հիմնական գաղափարն այն է, որ հատկաբանությունները փոխանցում են սոցիալ-մշակութային տեղեկատվություն, որն էլ իր հերթին լեզուն ուսումնասիրողների հաղորդակցական հմտությունների հաջողության գրավականն է:

**Բանալի բառեր.** միջմշակութային հաղորդակցություն, հենքային գիտելիքներ, արտալեզվական գործոններ, խոսքային վարքագիծ, լեզվաձանաչողական իրողություններ, հատկաբանական երկխոսություն, միջմշակութային իրազեկություն:

## **Ներածություն**

Անգլերեն ուսումնասիրողները հատկաբանական խոսքի տիրապետման գործընթացում պետք է ուսումնասիրեն ոչ միայն քերականություն և հաճապատասխան բառապաշտ, այլև տվյալ երկրի պատմաքաղաքական և մշակութային իրողություններին առնչվող երևույթներ: Ակնհայտ է, որ հատկաբանությունները մեծ արժեք են ներկայացնում ոչ միայն լեզվի, այլև մշակույթի տեսանկյունից: Ընդ որում, դրանց միջոցով կարելի է հետազոտել լեզվակիրների մշակույթը, ավանդույթները, սովորույթները, պատկերացումներն ու կարծրատիպերը: Օսար լեզվի ուսուցման հաղորդակցական ուղղվածությունը ենթադրում է հաղորդակցական բնույթի միավորների օգտագործման վրա հիմնված լեզվի ընկալման և արտաքերման ուսուցում: Ինչպես նշել է Ի.Ի. Ֆորմանովսկյան՝ հաղորդակցությունը ազատ արտահայտվելու և կայուն բանաձևեր վերարտադրելու կարողություն: Այնպիսի ուսուցություն, որը թույլ է տալիս տիրապետել հաղորդակցության օրենքներին և հասկանալ գրուցակի հաղորդակցական գործունեությունը (Փորմանովսկայ 1987:3):

Մի կողմից, փաստ է այն, որ ժամանակակից մեթոդական հետազոտություններում առաջին պլան է մղվում հաղորդակցական մոտեցումը, մյուս կողմից՝ հնարավոր չէ իրականացնել որևէ հաղորդակցություն առանց հատկաբանական երկխոսության:

## **Հատկաբանական երկխոսության ուսուցումը**

Հաղորդակցական հարացուցի շրջանակներում հատկաբանական երկխոսության ուսուցումը ենթադրում է համապատասխան մանակավարժահոգեբանական պայմանների ապահովում: Հիմնական դժվարություններից մեկն այն է,

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 11.07.2016:

որ ուսումնական պայմաններում հնարավոր չէ վերարտադրել լեզվակիրներին մատչելի լեզվական և հանրամշակութային ֆոնը: Հանրամշակութային հաղորդակցության ընթացքում լեզվակիրները յուրացնում են մշակութային արժեքները, իսկ միջնշակութային հաղորդակցության ժամանակ հաղորդակցվողները ծանոթանում և համեմատում են սեփական և ուսումնասիրվող մշակույթները: Այսքան էլ հեշտ չէ սովորողների համար երկու մշակույթների միջև առկա տարրերությունը ի հայտ բերել, բացահայտել դրանց ընդհանրությունները և տարրերությունները ուսումնական պայմաններում:

Հատկաբանական խոսքի յուրացման ձանապարհին առաջնային խնդիր է դարնում գործաբանական, հանրամշակութային բնույթի փոխներթափականցումների կանխումն ու հաղթահարումը: Վ. Գ. Գալը մեծ տեղ է հատկացնում գիտակցական մոտեցման կամ գիտակցականության սկզբունքի կիրառմանը, երբ աշակերտները հստակորեն սկսում են գիտակցել մշակութային բնույթի տարրերությունները: Նա նշում է, որ անհրաժեշտ է համապատասխան պայմաններ ստեղծել մշակութային կամ գործաբանական փոխներթափականցման հաղթահարման համար (Гак 1979:3):

Ակնհայտ է, որ մայրենի լեզվի և ուսումնասիրվող լեզվի ու մշակույթի յուրահատկության գիտակցումը կարող է անհամեմատ ավելի մեծ ազդեցություն ունենալ սովորողի վրա՝ բարելավելով աշակերտների խոսքային կարողությունները: Նշված համատեքստում մայրենի լեզուն և օտար լեզուն համդես են գալիս որպես համարժեք հասկացություններ, որոնք ձևավորվում են ոչ միայն անհատական-հոգեբանական կամ ուսումնական-հոգեբանական, այլև պատմամշակութային և հասարակական-քաղաքական գործոններով (Халеевա 1989: 192): Համեմատական վերլուծությունը սովորողներին հարավորություն է ընձեռած ձանաշելու սեփական մշակույթը մեկ այլ հասարակության հետ համեմատելով: Հենց համեմատությունն է սեփական և ուրիշի մշակույթի ձանաշման գործող մեխանիզմը:

Սովորողները պետք է յուրացնեն, որ համեմատությունը միայն մի լեզվահամակարգի պարզ տեղադրումը չէ մեկ այլ համակարգի վրա: Լեզուները համեմատելիս, չաետք է կենտրոնանալ միայն տարրերությունների վրա: Համեմատական վերլուծությունը պետք է ցույց տա, որ լեզվամշակույթների միջև գոյություն ունեն ոչ միայն տարրերություններ, այլև նմանություններ:

Մեթոդական առումով համեմատական վերլուծությունն ունի հետևյալ առավելությունները. ուսումնական գործընթացի արդյունավետություն և ինտենսիվություն, լեզվական նյութի ծավալի մեծացում, նրա ավելի ճշշտ և կոնկրետ վերարտադրում, ավելի հուսալի յուրացում, սովորողների ձանաշղողական ակտիվության խթանում: Ասվածի համատեքստում ուսուցման մեջ մեծ նշանակություն ունի նաև սովորողների հոլովական կարգավիճակը, իսկ օտար մշակույթի ընկալումը և դրա՝ սեփականի հետ համեմատելը միշտ հոլովականորեն են պատկերված, քանի որ առաջացնում են ոչ սեփականի, օտարի զգացողություն, մյուս կողմից՝ զարմանքի, կարեկցանքի, հետաքրքրության զգացում (Фурманова 1993:51):

Լեզվակիրների մոտ հաղորդակցական իրագեկությունը ձևավորվում է շվման ընթացքում, որը հանդիսանում է մարդկային սերունդների կողմից կուտակված փորձի փոխանցման գործընթաց: Շվման գործընթացը ներառում է այնպիսի գործոններ, ինչպիսիք են սոցիալական ձանաշղությունը, պրակտիկ

գործունեության գիտելիքների ձեռքբերումը, որոշակի նորմերի և դերերի յուրացումը: Անծի զարգացման և սոցիալականացման գործընթացում կարևոր գործն է հանդիսանում լեզվի՝ որպես տեքստային գործունեության տիրապետումը: Մայրենի լեզվի լեզվական պրակտիկան հիմնավորվում է ենթագիտակցորեն, որը նպաստում է մայրենի լեզվի ուսուցմանը:

Ուսումնական պայմաններում անհրաժեշտ է կաղապարել **սոցիալականացման գործընթացը**, այսինքն՝ ստեղծել միջմշակութային սոցիալականացման յուրահատուկ պայմաններ:

Այդ առումով կարևորվում է օտար լեզվի ուսուցման մեջ արտամշակութային սոցիալականացման սկզբունքի կիրառումը, որը ենթադրում է շփում տվյալ լեզվակիր ժողովորի մշակույթի հետ: Արտամշակութային սոցիալականացման սկզբունքը սերտորեն կապված է լեզվական գիտակցության տեսության հետ և հրականացվում է օտար լեզվի ուսուցման գործընթացում, գուգահեռ նաև անբաժան է տվյալ լեզվակրի մշակույթի ուսուցումից:

Ինչպես հայտնի է, օտար լեզու ուսումնասիրող աշակերտների բառապաշարը ձևականացվում է համապատասխան փուլերով, նոր լեզվական երևույթների, նոր հասկացությունների աստիճանական յուրացմանը: Հատկաբանական արտահայտությունները հիմնականում յուրացվում են լեզվի ուսուցման ավարտական փուլում, երբ հնարավոր է դառնում խոսել **խոսքային գործունեության** արտադրողական և վերարտադրողական մակարդակների մասին:

Օտար լեզվի տիրապետման գործընթացը, միաժամանակ, օտար լեզու ուսումնասիրող աշակերտների գիտակցության ձևականացման գործընթաց է: Գործ ունենալով երկրորդական սոցիալականացման հետ՝ աշակերտներն առնչվում են գործունեության նոր ձևերի, հրականության նոր հասկացությունների հետ:

Օտար լեզուն հանդես է գալիս որպես սովորողների երկրորդական սոցիալականացման միջոց, տվյալ գործընթացի նպատակը ազգային լեզվակրի սոցիալականացման պատճենահանումը կամ կրկնումը չէ: Այն ուղղված է միջմշակութային իրագեկության ապահովմանը: Օտար լեզուն դիտվում է որպես օտար լեզվամշակութային հրականության գիտակցման միջոց: Ոչ ազգային լեզվակրի գիտակցության ձևավորումն իրականացվում է ձանաչողական գործունեության արդյունքում: Ուղղակի հաղորդակցման բացակայության դեպքում մեծ դեր են խաղում օտարալեզու տեքստերը, որոնք պարունակում են օտար մշակութային հասկացություններ:

Սովորողները հաճախ չգիտեն, թե ինչ արտահայտություններ են ընդունված տվյալ լեզվական հանրության կողմից, այս կամ այն իրադրության մեջ:

Ժամանակակից հանրականությունը նշում է լեզվական իրադրության 2 հիմնական ձև՝ **ստանդարտ** (կամ կայուն) և **փոփոխվող**: Ստանդարտ լեզվական իրադրությունում մարդու լեզվական և ոչ լեզվական վարքագիծը խստորեն համակարգվում է: Ինչպես նշում են հետազոտողները՝ **ստանդարտ** (կայուն) լեզվական իրադրությունների համար կարևոր է իմանալ ոչ միայն ինչ ասել, այլ նաև թե ինչպես պահել իրեն: Հատկաբանական բանավոր խոսք սովորողները պետք է կարողանան օգտվել ինչպես ստանդարտ, այնպես էլ փոփոխվող լեզվական իրադրություններից:

Առաջին պլան է մղվում սովորողների հատկաբանական խոսքային վարքագիծի ձևավորման հիմնախնդիրը, հաշվի առնելով այն հանգանքները, որ հաղորդակցման տարբեր հասարակական իրադրությունների կիրառումը նպաս-

տում է հատկաբանական արտահայտությունների ձիշտ օգտագործմանը: Սույն պարագայում, անհրաժեշտ է ուսանողներին ապահովել յուրօրինակ կողմնորոշման համակարգով, որը նրանց թույլ կտա ընտրել հաղորդակցման համապատասխան պայմաններում արտահայտվելու խոսքային միջոցներ: Այդպիսի կողմնորոշչիներ կարող են հանդիսանալ **հենքային և արտաթեզվական գիտելիքները**:

Առանձնահատուկ նշանակություն ունի այն, որ «ոչ ազգային լեզվակրի» ձևավորումը հիմնականում իրականանում է այլանշակութային տեքստային գործունեության ուսուցման և վերլուծության միջոցով:

**Հատկաբանական երկխոսության** ուսուցման համար նպատակահարմար է օգտագործել գործառական նոտեցումը, որը թույլ է տալիս ապահովել խոսքային նորմի և կոնկրետ իրադրության մեջ բարի կիրարկության կապը, առանց որի ուսուցվող արտահայտությունների հիմքում ընկած լեզվական միավորները չեն իրականացնում որևէ հաղորդակցական գործառույթ և չեն առնչվում տվյալ խոսքային իրադրությանը (Մասսի 1981:85): Հատկաբանական խոսքի ուսուցման ընթացակարգերից կարելի է առանձնացնել ուսուցման համար ընտրվող հատկաբանական արտահայտությունները: Խալեևան նշում է, որ մեթոդիստների ջանքերը պետք է ուղղված լինեն նախ և առաջ հենց հասարակական, մշակութային նշանակության բաժիններին, որոնց տիրապետելով, սովորողները կյուրացնեն այլ էթնոմշակութային հանրությանը բնորոշ լեզվածանացողական իրողությունները և կարողանան համարժեքորեն կիրարել դրանք իրենց տեքստային գործունեության մեջ (Խալեևա 1989:107):

### **Լեզվանյութի ընտրության սկզբունքները**

Հատկաբանական խոսքի ուսուցման համատեքստում կարևորվում է այն, թե ինչպես է իրականացվում **լեզվանյութի ընտրությունը**: Ուսուցման նպատակով ընտրվող բազմաթիվ բառերից, կայուն բառակապակցություններից և խոսքային կաղապարներից պետք է ընտրել նրանք, որոնք ծավալով և կազմով համապատասխանում են տվյալ դասընթացի պայմաններին: Առանձնահատուկ նշանակություն ունի այն, որ առաջարկվող լեզվանյութը համապատասխանի սովորությունների գիտելիքների և հմտությունների մակարդակին:

Լեզվանյութի ընտրության սկզբունքներն անհրաժեշտ է հիմնավորել հաղորդակցական նոտեցման շրջանակներում: Դա ենթադրում է առաջադրել ընտրության հետևյալ պահանջները՝

1) Ընտրված նյութը պետք է ունենա այն հատկությունները, որոնք թույլ կտան այն օգտագործել որպես հաղորդակցման միջոց: Այն պետք է արտացոլի տվյալ խոսքային գործունեության առանձնահատկությունները և պետք է համապատասխանի հատկաբանական խոսքի ապահովման որակական չափանիշներին:

2) Լեզվանյութի ընտրությունը պետք է ապահովի նրա կիրառման առավելագույն արդյունավետությունը և դիտարկվի համապատասխան խոսքային գործունեության շրջանակներում կամ համապատասխան լեզվական գործունեության և նրա բովանդակության կապի ապահովման տեսակետից:

Հատկաբանական արտահայտություններն ընտրելիս պետք է հաշվի առնել ինչպես լեզվաբանական, այնպես էլ արտաթեզվական բնույթի գործուները:

**Միջնշակութային հաղորդակցության** զարգացման տեսանկյունից կարևոր վում են նաև հատկաբանական արտահայտությունների ընտրության հաղորդակցական սկզբունքները: Դա ենթադրում է ընտրել հաղորդակցական ուղղվա-

ծություն ունեցող տեքստեր, իրադրություններ, խոսույթներ, որոնք հիմնականուն բնագրային են, արտացոլում են խոսակցական լեզվի առանձնահատկությունները և բազմազան են իրադրային առումով:

Հատկաբանական խոսքի ուսուցման նվազագույն միավորներ ընտրելիս, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ տարբեր մշակույթներ ներկայացնող մարդիկ տարբերվում են իրենց խոսքային վարքագովով: Այսպիսով, անհրաժեշտություն է առաջանում համապատասխան խոսքային վարքագիր նորմերը յուրացնելու գործնքացում ապահովել լեզվական և արտալեզվական գործոնների օրգանական կազմը, քանի որ դա օտարալեզու բանավոր հատկաբանական խոսքի ուսուցման կարևոր պայման է:

Հատկաբանական արտահայտությունները մեր կողմից դիտվում են որպես ոչ թեմատիկ, ունիվերսալ, դրանք կարելի է օգտագործել տարբեր թեմաներում, համարյա ցանկացած տեքստում, անկախ որա բովանդակությունից:

Օտար լեզվի, առավել ևս հատկաբանական խոսքի ուսուցումը սերտորեն կապված է ժողովրդի՝ տվյալ լեզվակրի մշակույթի հետ շփումից: Հանրամշակութային նշանակության միավորների ընտրման սկզբունքը առաջարկում է հաշվի առնել ուսուցանող լեզվի երկրի մշակույթի և սովորողների երկրի մշակույթի ազգային յուրահատկությունները: Հատկաբանական խոսքը ներառում է **հենքային գիտելիքներ**, որոնց միջոցով հնարավոր է վերարտադրել կամ կաղապարել ուսումնական պայմաններում տվյալ լեզվական հանրությանը բնորոշ բազմաթիվ խոսքային իրադրություններ: Ըստ հ.ի. Խալեկայի՝ հանրամշակութային նշանակության միավորների ընտրության սկզբունքի կիրառումը նպաստում է հաղորդակցությունների հանրամշակութային բնույթի տարբերությունների հաղթահարմանը, որի արդյունքում հնարավոր է դառնում կրծատել նրանց միջև գոյություն ունեցող տեղեկատվական բացը (Խալեւա 1989:60):

### Եզրակացություն

Այսպիսով, հատկաբանական խոսքի ուսուցման նվազագույն միավորների ընտրություն իրականացնելիս, պետք է հաշվի առնել դրանց հասարակական նշանակությունը, խոսքանյութի մշակութային առանձնահատկությունը:

Օտար լեզվի ուսուցման համար անհրաժեշտ խոսքանյութն ընտրելիս, երկար ժամանակ առաջ էր քաշվում ոճական տեսակետից սահմանափակության սկզբունքը, ըստ որի՝ հաշվի էին աշնովում միայն այն միավորները, որոնք պատկանում են չեզոք կամ խոսակցական-գրական ոճին:

Հատկաբանական խոսքի ուսուցումն իրականացնելիս, անհրաժեշտ է կաղապարել բնականին մոտ ուսումնական խոսքային իրադրություններ, ստեղծել այնախի պայմաններ, որոնք նպաստում են կոնկրետ խոսքային իրադրություններում համապատասխան հատկաբանությունների ձիւ օգտագործմանը:

Հատկաբանական արտահայտություններ ընտրելիս գործառական-ոճական տարբերակնան սկզբունքի կիրառումը կապված է այն քանի հետ, որ հատկաբանական արտահայտություններն օգտագործվում են տարբեր հաղորդակցական իրադրություններում: Նկարագրված հատկաբանական երկխոսության և ընտրված հատկաբանական նյութի ուսուցումը պահանջում է որոշակի պայմանների ապահովում:

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. (2001) *The Penguin Dictionary of English Idioms.* / Ed. by D.M. Gullant & D. Hinds-Howell, Second Edition. London UK, New York: Penguin Books, pp.168.
2. *How to Teach English Idioms and Their Meaning.* Available at: <<http://busyteacher.org/3712-how-to-teach-english-idioms-and-their-meaning.html>> [Accessed March 2016].
3. Гак, В.Г. (1979) *Межъязыковое сопоставление и преподавание иностранного языка.* // Иностранные языки в школе. № 3. М.
4. Мишин, И.Ф (1981) *Методика обучения узуальным формам речи.* / Дис.... канд. пед. наук. - Часть 1. М.
5. Формановская, Н.И. (1987) *Русский речевой этикет: лингвистический и методический аспекты.* М.: «Русский язык»,
6. Халеева И.И. (1996) *Нерративный текст как форма национального социокультурного сознания (в подготовке переводчиков и преподавателей иностранного языка).* // Актуальные проблемы преподавания перевода и иностранных языков в лингвистическом вузе. (Тр./МГЛУ). Вып. 423. М.

### **Communicative Principles of Teaching Idioms**

The article covers the problem of teaching idioms as an effective means of forming and developing communicative competence. Learning a foreign language is not only acquiring grammar and vocabulary knowledge. The main idea of the article is that teaching idioms conveying a lot of information of sociocultural character will guarantee success in developing the learners' communicative skills.

### **Коммуникативные принципы обучения идиомам**

В статье рассматриваются вопросы обучения идиомам как эффективного метода формирования и развития коммуникативной компетенции учащихся. Изучение иностранного языка не должно замыкаться на изучении грамматики и приобретении словарного запаса.

В статье, в частности, обсуждается том факт, что идиомы являются носителями огромного количества информации социокультурного характера, что, в свою очередь, обеспечивает развитие коммуникативных умений учащихся.